չում: Մենք միայն միջնորդներ էինք, մէկից առնում էինք, միւսի վրայ ծախում էինք, մենք ողորմելի դալալներ էինք: Իսկ այժմ բանն ուրիշ է:

Նա հրամայեց, բերեցին մի քանի տեսակ բրդեղէն գործուածներ, դրեցին գրասեղանի վրայ:

— Նայեցէք այդ չուխաներին, — դարձաւ նա դէպի իր խօսակիցը. — դեռ անցեալ տարի, Փարիզի աշխարհահանդիսում, ասիական գործուածների կարգում, առաջին մրցանակը ստացաւ:

Բաղեշցին սկսեց մի հրճռանքով նայել:

— Հիանալի՛ գործուածներ են, — բացականչեց նա, — շատ հիանալի: Ես այժմ ուղիղն ասեմ ձեզ, ամաչում եմ, որ ձեզ հետ նստած եմ այդ հագուստով: — Նա ձեռքը տարաւ դէպի իր սեւ, անգլիական նուրբ մահուդից կարուած հագուստը եւ հարցրեց: — Միթէ՞ այդ բոլորը ձեր գործարանից է:

— Բոլորը, — պատասխանեց վաճառականը մի առանձին բաւականութեամբ: — Ախար ո՞վ ունի այդ գեղեցիկ բուրդը, որ մեր ոչխարներն ու այծերն են տալիս: Մենք մինչեւ այժմ դժբախտ էինք, որ չգիտէինք օգտուել մեր երկրի արդիւնքներից: Եւրոպացին մեր բուրդն ու բամբակը տանում էր, պատրաստում էր, եւ գործուածները տասնապատիկ գնով մեզ վրայ վաճառում էր: Իսկ մենք մնում էինք աղքատ, միայն օտարի քսակն էինք լցնում:

— Այո՛, այդպէս էր... — կրկնեց տխուր ձայնով բաղեշցին, ապա հարցրեց. — ի՞նչ պայմաններով են աշխատում ձեր գործարանի բանոորները:

— Արդիւնքից մի որոշ մասն են ստանում, — պատասխանեց վաճառականը: — Երկար փորձերից յետոյ ես այն համոզմունքին հասայ, որ նրանց պէտք է ընկերացնել: Այդ աւելի զօրացրեց նրանց եռանդը, աւելի պինդ կապեց գործի հետ: Նրանք ունեն խնայողական դրամարկղ, որից օգնում են իրանց ընկերներին, երբ մէկը հիւանդանում է, կամ վնասուելով աշխատել չէ կարողանում: Ես ինքս իմ խանութի համար պէտք եղած ապրանքները գնում եմ գործարանից, որպէս օտար մարդ:

— Այդ շատ մարդասիրական է, — նկատեց բաղեշցին, եւ նրա ջերմեռանդ աչքերը, կարծես, ասում լինէին. «օրհնեալ լինի՛ս»...

Նրանց խօսակցութիւնը ընդհատեց մի ծիծաղադէմ ծերունի, փոքր-ինչ կռացած մէջքով, ներկերի մէջ գունաւորուած ձեռքերով, որ ներս մտաւ եւ, մօտենալով վաճառականին, մտերմութեամբ ձեռք տուեց, յետոյ զարմացած նայեց բաղեշցու վրայ:

— Երեւի փողի համար էք եկել, — հարցրեց նրանից վաճառականը: